ջանին և Առաքելին և եղբաւր որդոցն Խաչատրին և Ղուսպատին և Յովհաննիսու սարկաւագին, հօրեղբարցն Բանարգիսին և Մելիքսոնին և որդոյն Կարապետին և Փախչանին, Յովսեփին և Աւետիսին...»։ «Այլ եւ ես Սրապիոն վարդապետս ետու զրիլ զքարոզ-գիրքս մեր հոգևոր որդոյս Աշխարհանոսիս».

«Ինձ յիշատակ անջնջելի.
Զձեզ աղաչեմ որ հանդիպի,
Տեսանիցէ և կամ օգտի,
Օրինակէ կամ ուսանի.
Յիշման առնէ գիս արժանի.
Յաղօթքն իւր սուրբ ընդունելի։
Այլ և զորդիքն իմ հոգելի.
Զաշակերտեալքս տեառն բանի,
Զտէր Մկրտիչն հեզահոգի.
Որ է բնական Մեծոփեցի.
Եւ ի յերկրէն Բաջբերունի
Զտէր Յովհաննիսն զՄշեցի.
Եւ զտէր Ղազարն Եզրնկացի.
Զտէր Պետրոսն Ուռհայեցի.
Եւ զՏիրատուրն Կարմիրվանցի.
Զտէր Յակոբ Կամախեցի.
ԶԱշխարհանոս անքարի.
Տրուպ ծառայ եմ ամենի։
Այլ և զվարպետս մեր արի
Տէր Թադէոս անուն բարի։»
(Մատ. Ցուց. 2. Հա. 1891. էջ 46—54)։

ՍՐԱՊԻՈՆ ՎՐԴ. ՈՒՌՀԱՑԵՑԻ.— ՄՁ. Թ. 340. Մեկն. Սաղմոսաց ձեռագիրին մէջ Սրապիոն վրդ. ունի երկու յիշատակարան. առաջինովը ձեռագիրը յիշատակ կուտայ Բարձրահայեաց Ս. Աստուածածնի վանքին ՌԾԲ (=1603) թուին, իսկ երկրորդովը՝ պահպանակին վրայ կը գրէ հետևեալը. «Ես Սրապիոն վրդպս. որ էի յԵրուսաղէմ ՌԽ (=1591) թվին. յուլիս զ. յաւուր ուրբաթի լսեցաք զբօթ մահուն տէր Դաւիթ պատրիարքին Ասորոց։ Յուլիս իը. տեսի երազ, որ իմ սարկաւագ Աստուածատուրն սև փիլոն էր առեր ի վերան ու կուլար թէ էր աբեղա չեղա»։ Սրապիոն վրդ. Գրիգոր ԺԳ անուամբ ամենայն